ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1 «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»ԲԲԸ-ն կարող է գործող սակագներում կատարել փոփոխություններ և լրացումներ ծանուցելով դրանց մասին հաճախորդներին՝ փոփոխությունների և լրացումների տեքստը «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»ԲԲԸ-ի տարածքում, կամ ինտերնետային կայքում հասանելի դարձնելու միջոցով: Փոփոխությունները և լրացումներն ուժի մեջ են մտնում «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»ԲԲԸ-ի կողմից սահմանված պահից, բայց դրանց մասին հաճախորդներին ծանուցելու օրվանից ոչ շուտ:

2 Միջնորդավճարները գանձվում են ՀՀ դրամով.
ա/ արտարժույթով արտահայտված գումարների նկատմամբ միջնորդավճարները գանձվում են հիմք ընդունելով գանձման օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ արժութային շուկայում ձևավորված տվյալ արտարժույթի միջին փոխարժեքը:
բ/ հաճախորդի հաշիվներին ՀՀ դրամով բավարար միջոցներ չլինելու դեպքում «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»ԲԲԸ-ն իրավունք ունի միջնորդավճարի գումարը, կամ դրա մի մասը փոխարկել արտարժույթով ունեցած միջոցներից՝ հիմք ընդունելով գանձման օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ արժութային շուկայում ձևավորված տվյալ արտարժույթի միջին փոխարժեքը:

3 Վարկերի, վարկային գծերի, այլ պարտավորությունների և/կամ ավանդների դիմաց հաշվեգրվող տոկոսագումարները գանձվում և/կամ վճարվում են ՀՀ դրամով՝ հիմք ընդունելով գանձման և/կամ վճարման օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ արժութային շուկայում ձևավորված տվյալ արտարժույթի միջին փոխարժեքը:

4 Վարկերի, վարկային գծերի և բանկի նկատմամբ այլ պարտավորությունների դիմաց հաշվեգրվող տոկոսները չեն կարող գերազանցել ՀՀ ԿԲ կոմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:

5 ԱԱՀ-ով հարկվող գործարքների սակագները ներառում են նաև ավելացված արժեքի հարկը:

6 Հիմք ընդունելով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»ԲԲԸ և հաճախորդի միջև երկարատև համագործակցությունը, հաճախորդի գործարքների ծավալները և այլ հիմնավոր պատճառներ, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»ԲԲԸ-ի կողմից կարող են կիրառվել այլ սակագներ և դրույքաչափեր:

7 Ֆիզիկական անձանց վճարված տոկոսագումարները համաձայն ՀՀ հարկային օրենսդրության պահանջների ենթակա են հարկման եկամտահարկով:

8 «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ տարածքում գործող բանկերում ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի) բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից: Երաշխավորվում են ավանդատուի ինչպես դրամային, այնպես էլ արտարժութային ավանդները:
Երաշխավորված ավանդի չափերն են՝
*եթե ավանդատուն բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ,ապա երաշխավորված ավանդի չափը տաս միլիոն հայկական դրամ է,
*եթե ավանդատուն բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը հինգ միլիոն հայկական դրամ է,
*եթե ավանդատուն բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը հինգ միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչեւ 10 միլիոն հայկական դրամով,
*եթե ավանդատուն բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է հինգ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը՝ հինգ միլիոն դրամի եւ հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով: